

ՕՀՀՀԱ Հայտարարագիր շահույթ չհետապնդող կազմակերպությունների համար

Միայն բանկի օգտագործման համար

Կազմակերպության հիմնական գործունեության հասցե է համարվում այն հասցեն, որը օգտագործվում է հարկային նպատակներով, կամ, եթե կիրառելի չէ, գլխավոր գրասենյակի հասցեն

Ես/մենք (փոխել անհրաժեշտության դեպքում), 1986թ. ընդունված Միացյալ Նահանգների ներքին եկամուտների օրենսգրքի 4-րդ գլխի A) ենթակետի, 1471-ից 1474-րդ մասերի համաձայն (այսուհետ՝ Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտ կամ ՕՀՀՀԱ և վերջինիս ներքո ընդունված կանոնակարգերը), սույնով հաստատում եմ/ենք հետևյալը՝

1. Կազմակերպությունը կազմավորված, ստեղծված կամ հիմնված չէ ԱՄՆ-ում, կամ ԱՄՆ օրենքների համաձայն, կամ վերջինիս որևէ նահանգի, ներառյալ՝ Կոլումբիայի նահանգը, օրենքների համաձայն,
2. Կազմակերպությունը հիմնադրվել և գործում է մեր երկրում բացառապես կրոնական, բարեգործական, գիտական, գեղարվեստական, մշակութային կամ կրթական նպատակներով,
3. Կազմակերպությունը ազատված է շահութահարկից իր ռեզիդենտության երկրում,
4. Կազմակերպությունը չունի բաժնետերեր կամ անդամներ, որոնք որպես սեփականատեր կամ շահառու որևէ իրավունք ունեն կազմակերպության եկամտի կամ ակտիվների նկատմամբ,
5. Ոչ կազմակերպության ռեզիդենտության երկրի օրենքները, և ոչ էլ հիմնադիր փաստաթղթերը թույլ չեն տալիս, որպեսզի կազմակերպության եկամուտը կամ ակտիվները տեղաբաշխվեն կամ վճարվեն որևէ անհատի կամ ոչ բարեգործական կազմակերպության, բացառությամբ, եթե դրանք համապատասխանում են կազմակերպության բարեգործական գործունեությանը, կամ հանդիսանում են մատուցված ծառայությունների կամ գույքի օգտագործման դիմաց ողջամիտ փոխհատուցում, կամ հանդիսանում են կազմակերպության կողմից ողջամիտ շուկայական գնով ձեռք բերված գույքի դիմաց վճարում,
6. Կազմակերպության ռեզիդենտության երկրի օրենքները և հիմնադիր փաստաթղթերը պահանջում են, որպեսզի կազմակերպության լուծարման կամ կազմալուծման դեպքում, կազմակերպության բոլոր ակտիվները փոխանցվեն պետական որևէ կազմակերպության, որը կառավարության մաս է կազմում կամ պետության կողմից վերահսկվող կազմակերպություն է (բոլոր դեպքերում, ոչ ԱՄՆ կառավարության կողմից) կամ այլ կազմակերպության, որը համապատասխանում է Հայտարարագրի մեջ նշված ոչ-առևտրային կազմակերպությունների սահմանմանը կամ օրենքի ուժով փոխանցվեն կազմակերպության ռեզիդենտության երկրի կառավարությանը կամ վերջինիս որևէ քաղաքական մարմնին,
7. Կազմակերպությունը գործում է իր անունից և չի հանդիսանում այլ անձի գործակալ, միջնորդ կամ լիազորված անձ,
8. Կազմակերպության շահույթ չհետապնդող գործունեության նպատակը հետևյալն է՝

Ես/մենք հաստատում եմ/ենք, որ տրամադրված տեղեկատվությունը ճիշտ է: Ցանկացած ժամանակ, հանգամանքների փոփոխություններից ելնելով վերոնշյալ 1-8 կետերում նշված տեղեկատվության ճշմարտացի չլինելու դեպքում ես/մենք պարտավորվում եմ/ենք 30 օրվա ընթացքում տեղեկացնել էյջ-էս-Բի-Սի-ին:

Ստորագրություն	<input type="text"/>
Անուն, ազգանուն	<input type="text"/>
Պաշտոն	<input type="text"/>
Ամսաթիվ	<input type="text"/>

Ստորագրություն	<input type="text"/>
Անուն, ազգանուն	<input type="text"/>
Պաշտոն	<input type="text"/>
Ամսաթիվ	<input type="text"/>

(Ստորագրված է լիազորության համաձայն)
Անհրաժեշտության դեպքում խնդրում ենք ավելացնել լրացուցիչ դաշտեր՝ լիազորությունների համաձայն ստորագրելու նպատակով:



ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՏ (ՕՀՀՀԱ)

Ստորագրման ենթակա փաստաթղթեր.

- Գործող ոչ ֆինանսական կազմակերպության հայտարարագիր
- Շահույթ չհետապնդող կազմակերպության հայտարարագիր

ԿԱՐԵՎՈՐ ՆՇՈՒՄ – Այս փաստաթուղթը պետք է դիտարկել ստորև ներկայացված հայտարարության հետ միասին, որը սույն փաստաթղթի մաս է կազմում:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսական կարգավորող մարմինների, կառավարությունների և բանկերի կողմից մի շարք էական փոփոխություններ են կատարվել ֆինանսական համակարգի և մեր հաճախորդների շահերի պաշտպանությունը և երկարաժամկետ ապահովությունը երաշխավորելու համար: Այդ փոփոխություններից մեկն Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտն է (ՕՀՀՀԱ), որը ներկայացվել է ԱՄՆ կառավարության կողմից որպես Միացյալ Նահանգների՝ 1986թ.-ին ընդունված ներքին եկամուտների օրենսգրքի մաս (օրենսգրքի ներքո ընդունված կանոնակարգերի հետ միասին): ՕՀՀՀԱ-ի նպատակն է ԱՄՆ հարկային մարմիններին հաշվետվություններ ներկայացնել ԱՄՆ անձանց կողմից տնօրինվող ֆինանսական ակտիվների վերաբերյալ:

Ի՞նչ նշանակություն ունի ՕՀՀՀԱ-ն ԷյՋ-Էս-Բի-Մի-ի և Ձեր համար

ԷյՋ-Էս-Բի-Մի-ն իր գործունեության բոլոր երկրներում պարտավորվել է ամբողջովին համապատասխանել ՕՀՀՀԱ-ին: Սա նշանակում է, որ մենք պետք է հաշվետվություններ ներկայացնենք ԱՄՆ հարկային մարմիններին այն հաճախորդների եկամուտների և/կամ շահույթի վերաբերյալ, որոնց վրա տարածվում է ՕՀՀՀԱ-ն: Այդ նպատակով մենք պետք է լրացուցիչ տեղեկատվություն ձեռք բերենք մեր հաճախորդներից՝ ԱՄՆ անձանց (USPs) և Օտարերկրյա ֆինանսական կազմակերպություններին բացահայտելու համար (FFIs): Այս նպատակից ելնելով հնարավոր է կարիք առաջանա բացահայտել նաև այլ հաճախորդների:

Բանկերը և այլ ֆինանսական հաստատությունները պարտավոր են յուրաքանչյուր տարի տեղեկատվություն ներկայացնել ԱՄՆ անձանց կողմից ուղղակիորեն կամ անուղղակիորեն տնօրինվող ֆինանսական հաշիվների վերաբերյալ:

Եթե մեզ չհաջողվի հաճախորդներից հավաքագրել անհրաժեշտ տեղեկատվությունը կամ փաստաթղթերը, կարող է հետագայում պահանջվել մեր հաճախորդներին վճարվող որոշ գումարների կամ հաճախորդների հաշիվների նկատմամբ կիրառել ԱՄՆ պահումներ, որոնք այսուհետ կկոչվեն «պահումների վճարումներ»: Մեզանից կարող է պահանջվել նաև դադարեցնել հաճախորդի հետ գործարար հարաբերությունը:

Որպեսզի բացահայտենք այն հաճախորդներին, որոնց վրա կարող է տարածվել ՕՀՀՀԱ-ով նախատեսված հաշվետվությունների ներկայացումը, մենք պետք է մեր հաճախորդների բազան համապատասխանեցնենք ՕՀՀՀԱ-ի օրենսդրությամբ սահմանված որոշակի չափորոշիչներին:

Ա՞րդյոք սա կիրառելի է Ձեր նկատմամբ

Չնայած նրան, որ օրենսդրությամբ սահմանված ՕՀՀՀԱ-ի չափորոշիչներին մեծամասնությունը հաշվետվության ենթակա չէ, այնուամենայնիվ դրանցից մի քանիսը կարող են կիրառվել մեր հաճախորդների նկատմամբ: ՕՀՀՀԱ-ի չափորոշիչներին մեր հաճախորդների համապատասխանությունն ապահովելու նպատակով վերջիններիս խնդրում ենք հաստատել իրենց ՕՀՀՀԱ-ի կարգավիճակը, ուսումնասիրել կիրառելի պայմանները և հաստատել, որ պահանջները բավարարված են:

Էյչ-Էս-Բի-Սի-ն չի կարող հարկային խորհրդատվություն տրամադրել այս գործընթացի կամ ՕՀՀՀԱ-ի դասակարգման վերաբերյալ:

Ու՞մ մասին մենք պետք է հաշվետվություններ ներկայացնենք ՕՀՀՀԱ-ի ներքո

Մենք պարտավոր ենք հստակ տեղեկատվություն ներկայացնել *Որոշակի ԱՄՆ Անձանց* պատկանող հաշիվների վերաբերյալ: Սա ներառում է ԱՄՆ քաղաքացիների և ԱՄՆ ռեզիդենտների, որոշ կազմակերպությունների կամ գործընկերությունների/ընկերությունների, որոնք հիմնվել կամ ստեղծվել են Միացյալ Նահանգներում, ինչպես նաև որոշ պասիվ կազմակերպությունների (տե՛ս «*Բ՞նչ է պասիվ եկամուտը*» և «*Ո՞րն է համարվում պասիվ կազմակերպություն (Պասիվ ՈՖՕԿ) ՕՀՀՀԱ-ի ներքո*» բաժինները) հաշիվները, որոնց բաժնետերերը հանդիսանում են ԱՄՆ քաղաքացի կամ ռեզիդենտ: Մենք նաև պարտավոր ենք ներկայացնել որոշակի տեղեկատվություն այն հաճախորդների կամ ֆինանսական կոնտրագենտների վերաբերյալ, որոնք չեն տրամադրի բավարար փաստաթղթեր վերջիններիս ՕՀՀՀԱ-ով սահմանված հարկային կարգավիճակը որոշելու համար:

Բ՞նչ է պահումների վճարումը

Պահումների վճարումը կամ ԱՄՆ աղբյուրից ստացված այն եկամտի վճարումն է, որը հաստատուն կամ որոշակի է, տարեկան կամ պարբերական (FDAP), կամ 2016 թվականից հետո կատարված այն անշարժ գույքի վաճառքից կամ այլ օտարումներից (ներառյալ մարումները) առաջացած համախառն հասույթի վճարումն է, որը կարող է առաջացնել ԱՄՆ աղբյուրից ստացված տոկոսային եկամուտ կամ շահաբաժին: Այս սահմանումը կարող է փոփոխվել և հետագայում ավելի լայն իմաստ ստանալ: Վերոնշյալ տարբեր տեսակի վճարումների հետ կապված պահումները կգործեն մինչև 2017թ.-ի հունվարի 1-ը:

Բ՞նչ է Ակտիվ ոչ ֆինանսական օտարերկրյա կազմակերպությունը (Ակտիվ ՈՖՕԿ)

Ակտիվ ոչ ֆինանսական օտարերկրյա կազմակերպություն տերմինը ընդհանրապես վերաբերվում է այն կազմակերպությանը, որը զբաղված է ակտիվ առևտրով կամ գործարարությամբ, որը ֆինանսական գործունեություն չէ:

Մենք պարտավոր չենք տեղեկատվություն տրամադրել Ակտիվ ՈՖՕԿ-ների կամ վերջիններիս բաժնետերերի վերաբերյալ, եթե դրանք համապատասխանում են հետևյալ չափորոշիչներին.

- Կազմակերպությունը չի հանդիսանում ԱՄՆ Անձ (տ՛ես ներքոնշյալ *ԱՄՆ Անձ*-ի սահմանումը),
- Կազմակերպությունը ֆինանսական հաստատություն չէ: Առավել մանրամասն տեղեկատվություն կարող եք գտնել «Ի՞նչ է նշանակում Ֆինանսական հաստատությունը ՕՀՀՀԱ-ի ներքո» բաժնում:
- Նախորդ օրացուցային տարվա ընթացքում կազմակերպության համախառն հասույթի մինչև 50 տոկոսն է պասիվ եկամուտ հանդիսանում: Պասիվ եկամտի սահմանումը կարող եք գտնել «Ի՞նչ է պասիվ եկամուտը»բաժնում:
- Կազմակերպության ակտիվների մինչև 50 տոկոսն այնպիսի եկամուտներ են, որոնք պասիվ եկամուտ են ստեղծում կամ պահվում են պասիվ եկամուտ ստանալու համար (որը իրենից ներկայացնում է եռամսյակային կտրվածքով հաշվարկված պասիվ ակտիվների միջին տոկոսային կշիռը): Կազմակերպության ակտիվների արժեքը որոշվում է վերջիններիս իրական շուկայական արժեքի կամ կազմակերպության հաշվեկշռում հաշվեգրված արժեքի հիման վրա (սահմանված կա՛մ ԱՄՆ, կա՛մ միջազգային հաշվապահական ստանդարտներով):

Էյջ-Էս-Բի-Սի-ն չի կարող հարկային խորհրդատվություն տրամադրել վերոնշյալի վերաբերյալ:

ԱՄՆ անձ

«ԱՄՆ անձ» տերմինը ներառում է.

- Միացյալ Նահանգների քաղաքացիներին կամ ռեզիդենտներին
- Ընկերություն կամ գործընկերություն/ընկերակցություն, որը հիմնված է կամ ստեղծված է ԱՄՆ-ում, կամ համաձայն ԱՄՆ կամ որևէ նահանգի օրենսդրության
- Ցանկացած գույք (ոչ օտարերկրյա գույք, օրինակ՝ գույք, որից ստացված եկամուտը ԱՄՆ աղբյուրներից չէ, կապված չէ ԱՄՆ-ում իրականացվող առևտրային կամ այլ ձեռնարկատիրական գործունեության հետ և ներառված չէ ԱՄՆ ներքին եկամուտների օրենսգրքի Ա ենթակետով սահմանված համախառն հասույթում):
- Ցանկացած տրաստ, եթե՝ (ա) ԱՄՆ դատարանը կարող է իրականացնել տրաստի վարչության առաջնային վերահսկողություն և (բ) մեկ կամ մի քանի ԱՄՆ անձ իրավասու են վերահսկել տրաստի էական որոշումները:

Ի՞նչ է նշանակում պասիվ եկամուտը

Պասիվ եկամուտը հիմնականում ներառում է՝

- Շահաբաժիններ՝ ներառյալ շահաբաժին հավասարեցված եկամուտը (նաև հայտնի որպես շահաբաժին փոխարինող)
- Տոկոսային եկամուտ՝ ներառյալ տոկոսային եկամտին հավասարեցված եկամուտը և ապահովագրական պայմանագրերում ներդրումներից բխող որոշ եկամտի տեսակներ
- Որոշ վարձավճարներ և հեղինակային իրավունքի դիմաց վարձավճարներ, որոնք չեն առաջացել ակտիվ առևտրային կամ գործարար գործունեությունից

- Անուիտետը
- Գործարքներից՝ ներառյալ ֆորվարդ գործարքներից և բորսայական ապրանքների հետ կապված նմանատիպ գործարքների որոշ տեսակներից առաջացած զուտ եկամուտը
- Արտարժույթի փոխանակումից ստացված որոշակի հասույթը
- Պայմանական հիմնական համաձայնագրերից ստացված զուտ եկամուտը
- Ապահովագրական պայմանագրերից ստացված կանխիկ գումարները կամ ապահովագրական ընկերությունների եկամուտները՝ կապված ապահովագրական պահուստների և անուիտետային պայմանագրերի հետ
- Ակտիվների վաճառքից գոյացած զուտ եկամուտը, որը նպաստում է վերոնշյալ եկամտի տեսակներից որևէ մեկի ավելացմանը

Պասիվ եկամուտը չի ներառում՝

- Որևէ տոկոսային եկամուտ, շահաբաժին, վարձավճար կամ հեղինակային իրավունքից բխող եկամուտ, որը ստացվել է փոխկապակցված անձից, պայմանով, որ այդ եկամուտը կարելի է պատշաճ կերպով ձևակերպել որպես փոխկապակցված անձի ոչ պասիվ եկամուտ:
- Որոշ բորսայական ապրանքների և արժեթղթերի դիվերների առօրյա գործունեության արդյունքում ստացված եկամուտը:

Պասիվ եկամտի առավել մանրամասն ձևակերպումը կարող եք գտնել ԱՄՆ ներքին եկամուտների օրենսգրքում և վերջինիս կանոնակարգերում՝ §1.1472-1(c)(1)(iv)(A)-(B).

Ի՞նչ է նշանակում ֆինանսական հաստատությունը ՕՀՀՀԱ-ի շրջանակներում

Ֆինանսական հաստատություն տերմինը ՕՀՀՀԱ-ի ներքո սահմանվել է լայն իմաստով և ներառում է հիմնականում բոլոր բանկերը, շինարարական կոոպերատիվները, ֆինանսական ակտիվների պահառությամբ զբաղվող կազմակերպությունները, ապահովագրական ընկերությունների որոշ տեսակներ, ակտիվների կառավարիչները և որոշ ներդրումային ֆոնդեր կամ կազմակերպություններ: Կազմակերպությունը, որը նշանակում է հավատարմագրային կառավարիչ, կամ, որը հանդիսանում էրրորդ անձ ակտիվների կառավարիչ կամ գործում է որպես ֆինանսական գործունեություն ծավալող կազմակերպությունների խմբի հոլդինգային կազմակերպություն, ինչպես նաև որոշ գանձապետական ծառայություններ մատուցող և խմբի ֆինանսավորում իրականացնող կազմակերպություններ նույնպես կարող են ընդգրկվել ֆինանսական կազմակերպության սահմանման մեջ:

Ֆինանսական հաստատության առավել մանրամասն սահմանումը կարող եք գտնել ԱՄՆ ներքին եկամուտների օրենսգրքում և վերջինիս կանոնակարգերում՝ §1.1471-5(e)(1) մինչև (6).

Ո՞րն է Շահույթ չհետապնդող կազմակերպությունը ՕՀՀՀԱ-ի շրջանակներում

Շահույթ չհետապնդող կազմակերպություն տերմինը հիմնականում վերաբերվում է այն շահույթ չհետապնդող ընկերությանը կամ կազմակերպությանը, որը բացառապես իրականացնում է հոգևոր, բարեգործական, գիտական, գեղարվեստական, մշակութային կամ կրթական գործունեություն: ՕՀՀՀԱ-

ի ներքո մենք պարտավորություն չունենք հաշվետվություններ ներկայացնել շահույթ չհետապնդող կազմակերպությունների վերաբերյալ:

ՕՀՀՀԱ-ի օրենսդրությամբ սահմանված են որոշակի պայմաններ, որոնց բավարարելու պարագայում միայն կազմակերպությունը կամ ընկերությունը ՕՀՀՀԱ-ի ներքո կարող է որակվել որպես շահույթ չհետապնդող: Պայմանների նպատակն է ապահովել, որպեսզի կազմակերպությունը կազմավորված լինի ԱՄՆ տարածքից դուրս, բացառապես բարեգործական նպատակներ հետապնդի և ԱՄՆ հարկերից խուսափելուն նպաստելու գործիք չհանդիսանա:

Ի՞նչ է նշանակում Պասիվ կազմակերպություն (Պասիվ ՈՖՕԿ) ՕՀՀՀԱ-ի տեսանկյունից

Լայն իմաստով ՕՀՀՀԱ-ի ներքո Պասիվ կազմակերպություններ են համարվում այն կազմակերպությունները կամ ընկերությունները, որոնք ստանում են պասիվ եկամուտ կամ ունեն պասիվ ակտիվներ և միաժամանակ ՕՀՀՀԱ-ով սահմանված որևէ այլ դասակարգման չեն համապատասխանում: Այդ կազմակերպությունները չեն իրականացնում ֆինանսական հաստատությանը բնորոշ գործունեություն:

Էյչ-Էս-Բի-Սի-ն պետք է այդ կազմակերպությունների սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ ունենա, որպեսզի որոշի, թե արդյոք ՕՀՀՀԱ-ով սահմանված հաշվետվությունների ներկայացումը կիրառելի է Պասիվ ՈՖՕԿ-ի էական ԱՄՆ սեփականատերերի նկատմամբ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Այս փաստաթուղթը նախատեսված է միայն Էյչ-Էս-Բի-Սի-ի այն հաճախորդների համար, որոնց այն տրամադրվել է: Այն իրենից ներկայացնում է ընդհանուր բնույթի ամփոփաթերթ և ունի տեղեկատվական նպատակ: Այն չպետք է դիտարկվի որպես հարկային կամ իրավական խորհրդատվություն: Էյչ-Էս-Բի-Սի-ն չի երաշխավորում վերջինիս ճշգրտությունը, ամբողջականությունը և պատասխանատվություն չի կրում ոչ փաստաթղթում տեղ գտած հնարավոր բացթողումների և ոչ էլ՝ 2014 թվականի հունիսի 17-ին ՕՀՀՀԱ-ի օրենսդրությունից բխող տեղեկատվության արդյունքում կրած որևէ կորստի համար:

Հաճախորդները իրենց կարգավիճակին համապատասխան պետք է ստանան մասնագիտացված իրավական կամ հարկային խորհրդատվություն: